

ՇԱՄՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊՈԱԿ  
ՏՆՕՐԵՆ

«\_08\_» \_12\_ 2016թ

ՀՐԱՄԱՆ N59

գ.Շամբ

ՇԱՄՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊՈԱԿ-Ի ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ  
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԳՈՐԾԵԼՈՒ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Շամբի Միջնակարգ Դպրոց ՊՈԱԿ-ի աղետների ռիսկերի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, սովորողների, արտակարգ իրավիճակներում ուսուցչական կազմի պաշտպանության կազմակերպման ու շրջակա տարածքի բնակչության պաշտպանությանը ներգրավման նպատակով և ղեկավարվելով Սյունիքի մարզպետի 2010 թվականի նոյեմբերի 5-ի թիվ 253-Ա որոշմամբ հաստատված դպրոցի կանոնադրության 68-րդ կետի 10 և 12 ենթակետերով:

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել «Շամբի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի «այսուհետ՝ դպրոց»՝
  - 1) աղետների ռիսկի նվազեցման (այսուհետ՝ ԱՌՆ) և արտակարգ իրավիճակների (այսուհետ՝ ԱԻ) խորհուրդի կազմը և գործառույթները՝ համաձայն N 1 հավելվածի.
  - 2) տարահանման և պատուպարման կազմակերպման խումբի կազմը և գործառույթները՝ համաձայն N 2 հավելվածի.
  - 3) հրշեջ-փրկարարական խմբի կազմը և գործառույթները՝ համաձայն N 3 հավելվածի.
  - 5) հաղորդակցության ու ազդարարման կազմակերպման խումբի կազմը և գործառույթները՝ համաձայն N 4 հավելվածի.
  - 6) հոգեբանա-սոցիալական աջակցության կազմակերպման խումբի կազմը և գործառույթները՝ համաձայն N 5 հավելվածի.
  - 7) առաջին օգնության կազմակերպման խումբի կազմը և գործառույթները՝ համաձայն N 6 հավելվածի:
2. Սույն հրամանի 1-ին կետով ստեղծված խմբերի ղեկավարներին՝
  - 1) մինչև սույն թվականի դեկտեմբերի 1-ը մշակել դպրոցի աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակներում գործելու պլանը.
  - 2) մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 20-ը մշակել դպրոցի աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների տարեկան պլան-ժամանակացույց.
  - 3) յուրաքանչյուր տարվա սեպտեմբեր և հունվար ամիսների 25-ը իրականացնել պլանի ճշգրտում,
  - 4) սույն հրամանի 1-ին կետով ստեղծված խմբերի կազմի և դպրոցի անձնակազմի ու աշակերտների ուսուցումը և պատրաստումն իրականացնել «Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության հիմնահարցերով» ուսումնական գործընթացի ժամանակ և արտադասարանական ժամերին՝ պատրաստման և ուսուցման պլանի համաձայն:
3. Խորհրդի ղեկավարի տեղակալ, զինղեկ Ա.Մարտիրոսյանին՝ սույն հրամանի 1-ին կետով ստեղծված ԱՌՆ և ԱԻ խորհրդի և խմբերի կազմերում ներգրավված յուրաքանչյուր անձի կամ անձանց փոփոխության դեպքում 5-օրյա ժամկետում ներկայացնել ինձ սույն հրամանի փոփոխման վերաբերյալ հրամանի նախագիծ:
4. Հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:
5. Հրամանը հայտարարել մանկավարժական խորհրդի ժամանակ:

տնօրեն՝



Ս.Զաքարյան